

կաշու փրկութեան համար — անա ներկայ դատաւարութեան բնորոշ գիծը, որ անշուշտ ապագայ պատմաբանի համար առատ և ճոխ նիւթ պէտք է մատակարարէ՝ բնորոշելու ամբողջ կուսակցութեան բարոյական ֆիզիօնօմիան: Մաղթենք, որ այլ ևս բարոյական այլանդակութիւն և հրէշաւորութիւն մերկացնող այդպիսի դատար չունենանք: Եւ դաշնակցականները պէտք է փառք տան Աստուծուն, որ դատը եղաւ դժնփակ և անագին մերկացողական նիւթերը մնացին ծածկուած՝ հայ ժողովրդից ու հրատարակութիւնից: Բայց, անշուշտ, պատմութեան ամենախոյզ ձեռքը ապագայում կը ծանրանայ այդ վերին աստիճանի հետաքրքրական նիւթերի վրայ և կը մերկացնէ, թէ ինչ է եղել Դաշնակցութիւն կոչուած կուսակցութիւնը և ինչ գնահատութեան է արժանի նա:

Հրապարակի վրայ գրուած հրատապ հարցն է ներկայումս հայկական տպագրութեան 400-ամեակի և տարերի գիւտի 1500-ամեակի տօնախմբութեան հարցը, որ մեծ պառակտումն է առաջ բերել էջմիածնի և «Հօրիզօնի» շուրջ բոլորուած թայֆայականների միջև:

Նորահաստատ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ի տնօրէնութեամբ, որ հիմնուած է էջմիածնի ձեմարանի մանկավարժական ժողովի մի որոշման վրայ, կայացած այս տարուայ փետրուարի 18-ին, էջմիածնում կազմուած է մի կենտրօնական յօբելեանական յանձնաժողով, նախագահութեամբ յայտնի հայ բանասէր Գալուստ-Միաբանի և անգամակցութեամբ՝ մի քանի եկեղեցականների ու ուսուցիչների: Այդ յանձնաժողովի վրայ պարաաւորութիւն է գրուած կազմակերպել այս տարուայ հոկտեմբերի 13-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, էջմիածնում հայկական տպագրութեան 400-ամեակի և հայկական գրերի գիւտի 1500 ամեակի միացեալ յօբելեանը: Միևնոյն ժամանակ որոշուած է այդ մեծ համազգային յօբելեանը յաւերժացնելու համար մի մեծ ակտով հիմնել համազգային դպրոցական ֆօնդ՝ ամբողջ հայութեան համար:

Ամեն մի կօրրեկտ, անաչառ անձն, կարգալով էջմիածնի այս որոշումը, անկեղծօրէն պէտք է ուրախանայ, ինչ և լինի նրա վերաբերմունքը դէպի էջմիածնի այժմեան զեկավարները, որ էջմիածինը վերջապէս այս անգամ ցանկանում է մի ակտիվ մասնակցութիւն ունենալ ազգային գործերին, գլուխ կանգնել մի գրական-եկեղեցական մեծ տօնի (որովհետև անուրանալի է և եկեղեցու ունեցած անագին դերը հայ ազգի պատմութեան

այդ երկու նշանաւոր դէպքերի մէջ), աշխատել նորից բարձրացնել հայրապետական աթոռի հմայքը (պրէստիժը), նշանակութիւնը, որ այնքան ընկել է վերջին տարիները, աշխատել համախմբել մի մեծ ազգային-եկեղեցական տօնախմբութեան շուրջը տարարնակ հայութեան ներկայացուցիչներին: Եւ մտածելով այդպէս՝ ամեն մի հայ ինտելիգենտ, ամեն մի հայ հաստատութիւն, ամեն մի հայ թերթ, որ հնարաւորութիւն ունի որևէ կերպով աջակցութիւն ցոյց տալ այդ գործին, իր բարոյական պարտականութիւնը պէտք է համարի առաջարկել իր ծառայութիւնները էջմիածնի յանձնաժողովին: Սակայն այդպէս չմտածեցին «Հօրիգօնը» և հօրիգօնականները, այլ, ընդհակառակը, այսօր նրանք հետամուտ են և աշխատում են ամեն կերպ խափանել տալ էջմիածնի տօնը, ինչպէս աշխատեցին և հետամուտ եղան խափանել «Մշակի» յօրեւեանը: Նրանք իրանց անտակտութիւնը, անկօրրեկտութիւնը, կրքոտութիւնը հասցրին այն աստիճանի, որ հրապարակով բողոքեցին Կաթողիկոսի և էջմիածնի որոշման դէմ և նոյնիսկ Կաթողիկոսի վարմունքը հուշակեցին իբրև անբացատրելիօրէն անուշադիր վերաբերմունք, իբրև անհասկանալի եւ անտրամաբանական և իբրև վիրաւորական:

Ի հարկէ, ոչ մի կասկած չկայ, որ ինչպէս «Մշակի» յօրեւեանի դէմ սկսած անճարակ արշաւանքի մէջ հօրիգօնականները, որոնց գլուխ է կանգնել այժմ՝ իր պատմական կեղծիքներով տխրահռչակ դարձած Լէօն, սոսկալի պարտութեան մատուցելին, նոյն պարտութիւնը կը կրեն և ներկայ իրանց ամօթալի արշաւանքի մէջ հոկտ. 13-ի տօնի դէմ: Բայց հօրիգօնականների վարմունքը բնորոշելու համար արժէ տեսնել նրանց տղայամիտ և սոփեստական պատճառաբանութիւնները:

Խնդիրն այն է, որ յունուար ամսին Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան նախաձեռնութեամբ մի ժողով է գումարվում խորհրդակցելու՝ միայն հայկական տպագրութեան 400-ամեակի տօնման մասին (այդ ժողովում և ուղարկուած հեռագիրներում խօսք չէ լինում և չկայ գրերի գրութի 1500-ամեակի մասին): Այդ ժողովին հրաւիրուած են լինում Թիֆլիսի հայոց կրթական, բարեգործական, տպարանական, լրագրական հաստատութիւնների ներկայացուցիչները. ժողովում «Մշակի», «Արօրի» և Յոննանեան դպրոցի ներկայացուցիչների կողմից հարց է տրվում ամենից առաջ որոշել այն հարցը, թէ ճիշտ է տպագրութեան ճիշտ թուականը. մի հարց, որ այդ ժամանակ մամուլի մէջ բանակոտի առարկայ էր և չէր լուծուած, և առաջարկվում է ընտրել մի մասնաժողով՝ հարցը լուծելու համար, ապա ըստ այնմ ձեռնարկել

յօրելեանի կատարման հարցի քննութեան: Այդ առաջարկը ժողովի մէջ չէ անցնում, ուստի վերոյիշեալ ներկայացուցիչները թողնում են ժողովը և հեռանում և այլ ևս չեն մասնակցում ժողովի շարունակութեանը, որ տեղի է ունենում փետրուարի 8-ին այս անգամ աւելի սակաւաթիւ ներկայացուցիչների մասնակցութեամբ և ուր ընտրվում է «Յօրելեանական Յանձնախումբ» շատ միակողմանի կերպով, առանց մշակականների որևէ ներկայացուցչի, և բաղկացած, ըստ մեծի մասին, այնպիսի անձերից, որոնք հայ գրականութեան և բանասիրութեան հետ ոչ մի ընդհանուր կապ և առնչութիւն չունեն կամ որոնք թիֆլիսից դուրս կամ միանգամայն կամ գրեթէ անծանօթ են, ինչպէս բժ. Ա. Զարգարեան, Գր. Վարդանեան և այլք: Մի քանի ժամանակից յետոյ, բայց արդէն աւելի ուշ, քան էջմիածնի ճեմարանի մանկավարժական ժողովի որոշումը, թիֆլիսի այդ միակողմանի յանձնախումբը որոշում է միայն տըպագրութեան 400-ամեակի յօրելեանը տօնել թիֆլիսում, նոյեմբերի 26-ին, մինչ, ինչպէս հաղորդում է պաշտօնական «Արարատը», էջմիածինը արդէն փետրուարի 21-ին որոշած է լինում տօնել հոկտ. 13-ին ոչ միայն 400-ամեակի, այլ և հայկական գրերի գիւտի 1500-ամեակի միացեալ յօրելեանը:

Ընդունենք մի բայէ, որ թիֆլիսի յանձնախումբը աւելի վաղ որոշել է տօնել նոյեմբերի 26-ին: Միթէ սրանից հետևում է, որ էջմիածինը պէտք է յետ կանգնի իր դիտաւորութիւնից՝ Ամենևին ոչ: Եւրօպական երկիրներում յաճախ պատահում է, որ մի քանի գիտական կամ հասարակական հաստատութիւնների մէջ միտք է յղանում տօնել այս կամ այն պատմական դէպքը, յօրելեանը: Սակայն բոլոր նախաձեռնողները վերջ ի վերջոյ նախապատուութիւնը տալիս են այն հաստատութեան, որ նկատվում է աւելի հեղինակաւոր, աւելի ձեռնհաս և աւելի իրաւունք ունեցող: Արդ, մեր մէջ ամենքը, նոյն իսկ իրանք հօրիզօնականները փափագ և ցանկութիւն յայտնեցին, որ 400-ամեակի և 1500-ամեակի տօներին տրուի համազգային, համահայկական բնաւորութիւն: Եթէ այդ այդպէս է, եթէ այդ ցանկութիւնը անկեղծ է, միթէ կասկած կարող է լինել այն մասին, թէ ներկայումս հայկական բոլոր հաստատութիւնների մէջ ամենահեղինակաւորը, ամենաձեռնհասը և ամենից շատ իրաւունք ունեցողը էջմիածինն է և այդտեղ կատարուող տօնախմբութիւնը, այն ևս Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնութեամբ, կարող է զրաւել երկրագնդի բոլոր տարաբնակ հայութեան ներկայացուցիչներին: Միթէ կարող է կասկած լինել այն մասին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւերին աւելի շատ և աւելի մեծ պատրաստականութեամբ արձագանք կը տան

Կ. Պօլսի պատրիարքը, ազգային ժողովը, Ամերիկայի, Եւրօպայի, Բօլզարիայի, Եգիպտոսի, Պարսկաստանի հայկական գաղութներն իրանց բոլոր հիմնարկութիւնների հետ միասին, քան այն յանձնախմբի հրաւերին, որի նախագահն է այդ վայրերի հայութեանը միանգամայն անժանօթ մի բժիշկ Ա. Զարգարեան կամ որի անդամ է մի Գր. Վարդանեան, որոնք հայ սրտին և մտքին ոչ մի բան չեն ասում, կամ նոյնիսկ մի Լէօ, որի հընչակը՝ իբրև գրող՝ այնքան նսեմացաւ վերջին ժամանակները իր ամօթալի խոստովանութեամբ պատմական փաստերը կեղծելու մասին: Կ. Պօլսի ազգային վարչութիւնը, ուսումնական խորհուրդը՝ Միացեալ Ընկերութիւնը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Պետերբուրգի Եկեղ. Խորհուրդը, Նոր-Նախիջևանի Բ. Ընկ. և այլք հաճոյքով կուղարկեն իրանց ներկայացուցիչներին Էջմիածնի տօնին և հանդէսներին, որոնց նախագահելու է հայոց եկեղեցու Պետը, քան Թիֆլիս մի բոլորովին մասնաւոր և միայն Թիֆլիսի մի քանի հաստատութիւնների ձեռքով ընտրուած յանձնախմբի ձեռքով կատարուող տօնին: Գալով նուէրներին, նոյնպէս հայ հարուստները, հայ գաղութները, հայ ժողովուրդը սիրայօժար և աւելի առատաձեռնութեամբ կը տան իրանց լուծան համազգային դպրոցական Ֆօնդի օգտին, որից օգտուելու է ամբողջ հայ ազգը, և որի ղեկավարութիւնը գլխունուելու է սինօզի պէս մի մնայուն հաստատութեան ձեռքում, քան յօգուտ մի գրական Ֆօնդի, որից օգտուելու են միայն սահմանափակ թուով անհատներ և որի ղեկավարութիւնը գլխունուելու է մի յանձնախմբի ձեռքում, որի հեղինակութիւնը, մնայնութիւնը կամ ձեռնհասութիւնը շատ և շատ կասկածելի է:

Պարզ է, որ խոհեմութիւնը, տակար, կօրրեկտութիւնը պահանջում էին, որ Թիֆլիսի յանձնախումբը փոխէր իր որոշումը, միանար Էջմիածնի որոշման և, յայտարարելով իրան տեղական մամնաժողով, աջակցէր կինտրօնական-էջմիածնական յանձնաժողովին՝ աւելի մեծ փայլ և շուք տալու հոկտեմբ. 13-ի տօնախմբութեան:

Բայց անարգ և անզուսպ փառասիրութիւնը, անձնական շահերը կուրացնում են շատերին, և Լէօները իրանց անձնական փառամոլութիւնը գերադասում են ընդհանուրի շահերից, հասցնելով իրանց յանդգնութիւնը ծիծաղելի պահանջկոտութեան:

Ոչ մի կասկած չկայ, որ հայ ժողովրդի լաւագոյն մասի, գիտակից և առողջամիտ մասի ամբողջ համակրութիւնը հոկտ. 13-ի տօնախմբութեան կողմը կը լինի: